Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

2017 թվականի դեկտեմբերի 5-ից 8-ը ք. Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) գործուղման վերաբերյալ

- **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

  Վահան Մարտիրոսյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար:

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

  Ռուսաստանի Դաշնություն քաղաք Մոսկվա, 2017թ. դեկտեմբերի 5-ից 8-ը:

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

  Ռուսաստանի Դաշնության Տրանսպորտի նախարար,
  Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի անդամ, Էներգետիկայի և ենթակառուցվածքների նախարար:

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն <<Եվրասիական թվային պորտալ դեպի ապագա՝ գլխավոր նախագիծ և կառուցում>> թեմայով խորհրդակցությանը և <<Տրանսպորտային շաբաթ-2017>> ամենամյա միջոցառմանը:

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

2017 թվականի դեկտեմբերի 5-ին ք. Մոսկվայում կայացել է «Եվրասիական թվային պորտալ դեպի ապագա՝ գլխավոր նախագիծ և կառուցում» գագաթնաժողովը, որը

կազմակերպվել էր Եվրասիական տնտեսական միության մասնակից պետությունների նախագահների հանձնարարությամբ:

Գագաթնաժողովի ընթացքում քննարկվել են թվային փոխակերպման և ինտեգրման օրակարգին առնչվող հարցերը, ինչպես նաև ԵՏՄ-ի թվային օրակարգի իրականացման առաջնահերթությունների շրջանակներում նախագծերը:

Ղազախստանի Հանրապետության տեղեկատվության և հաղորդակցությունների նախարարի առաջարկությամբ որոշվեց 2018 թվականի փետրվարի 2-ին Ալմաթի քաղաքում անցկացնել Համաժողով, որն ուղղված կլինի ինտեգրման օրակարգի հարցերի քննարկմանը:

2017 թվականի դեկտեմբերի 6-ին ք. Մոսկվայում <<Տրանսպորտային շաբաթ 2017>> միջոցառման շրջանակներում կայացած <<Ռուսաստանի Տրանսպորտ>> միջազգային ֆորումի և ցուցահանդեսի բացմանը մասնակցում էին պատվիրակություններ Բելառուսից, Ղազախստանից, Ղրղզստանից, Ուկրաինայից, Մոլդովայից Տաջիկստանից Ուզբեկստանից:

Վերոնշյալ Ֆորումի շրջանակներում ներկայացվեց <<Թվային Էկոնոմիկայում Գլոնաս համակարգը: Քննարկվեցին <<Գլոնաս>> համակարգի դերը էկոնոմիկայում, տրանսպորտային համակարգի համար նորագույն լուծումները, նովիգացոն համակարգի հեռանկարները և միջազգային համագործակցության շրջանակները: Հանդիպման ժամանակ քննարկվեց Հայաստանի Հանրապետությունում <<Գլոնաս>> համակարգի ներդրման հարցը: Ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ առավել մանրամասն քննարկումներ իրականացնել Հայաստանի Հանրապետությունում:

2017 թվականի դեկտեմբերի 7-ին <<Տրանսպորտային Շաբաթ-2017>> շրջանակներում կայացավ ԱՊՀ անդամ պետությունների Համակարգված տրանսպորտային խորհրդակցություն: Խորհրդակցությունը նախագահում էր Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարար Մակսիմ Սոկոլովը: Խորհրդակցության շրջանակներում ներկայացվեց 2017 թվականին կատարված աշխատանքները, մասնավորապես՝

- <<Տրանսպորտային անվտանգության ապահովման նպատակով ԱՊՀ անդամ պետությունների կողմից տեղեկատվության փոխանակման մասին>> Համաձայնագրի անդամ պետությունների կողմից ներպետական ընթացակարգի իրականացման ընթացքը:

- ԱՊՀ անդամ պետությունների տարածքում միջպետական փոխադրումների իրականացման ժամանակ տրանսպորտային անվտանգության ապահովման նպատակով 2017-2019 թվականների առաջնային միջոցառումների կատարման ընթացքը:
- ներկայացվեց ՌԴ-ի կողմից տրանսպորտի անվտանգության ապահովման նպատակով ստեղծված <<Գլոնաս>> համակարգը և 2017 թվականին դրա զարգացմանն ուղված միջոցառումները:
- 2018-ի թվականին ԱՊՀ անդամ պետությունների Համակարգված տրանսպորտային խորհրդակցության նախագահի տեղակալներ ընտրվեցին Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների և Ղրղստանի տրանսպորտի և ճանապարհների նախարարները:

Եվրասիական տնտեսական միության շրջանակներում 2017 թվականի դեկտեմբերի 7-ին կայացավ անդամ պետությունների տրանսպորտի նախարարների հանդիպումը: Հանդիպմանը նախագահում էին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ Տիգրան Սարգսյանը և կոլեգիայի անդամ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Էներգետիկայի և ենթակառուցվածքների նախարար Ադամկուլ Ժունուսովը:
Հրավիրված էր Չինաստանի Ժողովրդական Հանրապետության տրանսպորտի նախարարի տեղակալը:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նախարարական հանդիպմանը ներկայացվեց Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տրանսպորտի բնագավառում 2017 թվականին կատարված աշխատանքները և 2018 թվականին անդամ պետությունների կողմից նախատեսվող աշխատանքները:

Հանդիպման ժամանակ քննարկվեց 2017 թվականին հաստատված <<Տրանսպորտային քաղաքականության Համակարգված (համաձայնեցված) հիմնական ուղղությունների և իրականացման փուլերի>> 2018-2020 թվականների ճանապարհային քարտեզը: Քարտեզը նախատեսում է Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տրանսպորտի առանձին տեսակների համաձայնեցված քաղաքականության մշակումը և անդամ պետությունների կողմից ընդունումը:

Քննարկվեց նաև անդամ պետություններում տրանսպորտային քաղաքականության խոչընդոտների ցանկի սահմանումը և որոշվեց շարունակել խոչընդոտների վերացման աշխատանքները:

Միաժամանակ քննարկվեց անդամ պետությունների տարածքում կաբոտաժային բեռնափոխադրումների իրականացման ընթացքը: Հանդիպման ժամանակ արձանագրվեց, որ Հայաստանի Հանրապետությունը ավարտել է օրենսդրական փոփոխությունները և պատրաստ է սկսել կաբոտաժային փոխադրումները:

Քննարկվեց <<Մետաքսի ճանապարհ>> տնտեսական գոտու և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից ներկայացված տրանսպորտի ենթակառուցվածքային ծրագրերը:

Տրանսպորտի ենթակառուցվածքային ծրագրերում ներառված է Հայաստանի Հանրապետության կողմից ներկայացված <<Հյուսիս –Հարավ>> ճանապարհային միջանցքի և <<Հարավային Երկաթուղու>> կառուցման ծրագրերը:

Հանդիպմանը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության տրանսպորտի նախարարի տեղակալը նշեց, որ ներկայացված նախագծերը քննարկվում են Չինաստանի ժողովրդական հանրապետությունում շահագրգիռ պետական կառավարման մարմիններում և արդյունքների մասին կտեղեկացնեն Եվրասիական տնտեսական միությանը:

Հաջորդ նախարարական հանդիպումը կանցկացվի Բելառուսի Հանրապետությունում՝ 2018 թվականի փետրվարին:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Վահան Մարտիրոսյան

19.12.2017թ.